ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ֆինանսական ներգրավվածություն»
գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար,
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ֆինանսական ներգրավվածության (Financial Inclusion) ազդեցությունը տնտեսական ընդհանուր միջավայրի վրա պարբերաբար արծանագրվում է Քսանի անդամ երկրների առաջնորդների կողմից, առաջադրվում է ներգրավվածության ընդլայնմանն ուղղված միջոցառումների շարք: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտություններն ու մշակումները հիմք են դարձել ֆինանսական ներգրավվածության գնահատականների ձևավորման համար: Հրապարակվել են ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների վերաբերյալ 2011 թ. և 2014 թ. անցկացված հարցումների առաջին համընդհանուր գնահատականները (Global Findex Database): Բերված են Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կազմում Հայաստանը բնութագրող ցուցանիշները: Գնահատականները համեմատությունների դաշտում են: Սակայն առաջնայինն այն է, որ հետազոտությունների հիմնարար միավորն անհատի, ապա նաև ընդհանրական ֆինանսական վարքագիծն է, ինչը զուգահեռաբար ենթադրում է միջազգային ասպարեզում ֆինանսական ներգրավվածության գնահատման գործընթացների հետազոտություն: Նպատակը ներքին ուժերով Հայաստանում ֆինանսական ներգրավվածության պարբերական գնահատումն է որպես երկրի ֆինանսական կայունության ապահովման ուղղություն:

Հիմնաբառեր. *ֆինանսական ներգրավվածություն, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, ֆինանսական ներգրավվածության գործողությունների պլան, միջազգային ֆինանսական կազմակերպություններ, համընդհանուր ֆինանսական համակարգ,*

ֆինանսական կայունություն, ֆինանսական ներգրավվածության գնահատման ելքային ցուցանիշներ
JEL: G01, G23, G32

«Ֆինանսական ներգրավվածությունը» (Financial Inclusion) 2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո լայն տարածում է ստացել որպես ազգաբնակչության ու հատկապես փոքր ձեռնարկատիրության ֆինանսական ծառայությունների հասանելիության աստիճանը բնութագրող հասկացություն: Տնտեսական ընդհանուր միջավայրի վրա ֆինանսական ներգրավվածության կարևորությունն ու ազդեցությունը պարբերաբար արձանագրվում են Քսանի անդամ երկրների առաջնորդների կողմից, առաջադրվում է ներգրավվածության ընդլայնմանն ուղղված միջոցառումների շարք[1]: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից արդեն իսկ կատարված բազմաթիվ ու մեծածավալ հետազոտություններ ու մշակումներ հիմք են դարձել ամբողջ աշխարհի, տարածաշրջանների և առանձին երկրների ֆինանսական ներգրավվածության գնահատականների ձևավորման համար:

2012 թ. հրապարակվել են ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների վերաբերյալ 2011 թ. աշխարհում անցկացված հարցումների արդյունքում ձևավորված առաջին համընդհանուր գնահատականները: Նյութը, մասնավորապես, ընդգծում է. «Ցուցանիշների տվյալների առաջին հանրային բազան, որ հետևողականորեն չափում է մարդկանց կողմից ֆինանսական ծառայությունների օգտագործումը տարբեր երկրներում և ժամանակի ընթացքում, լրացնում է ֆինանսական ներգրավվածության տվյալների մեծ բացը»[2]: Միևնույն ժամանակ, ի լրումն համընդհանուր տվյալների, հրապարակվում են նաև ֆինանսական ներգրավվածության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների և առանձին երկրների [3]: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների կազմում բերվել են նաև Հայաստանի ֆինանսական ներգրավվածությունը գնահատող տվյալները[4]:

Հաջորդ հրապարակումը վերաբերում է 2015 թ., որ ամփոփում է 2014 թ. ամբողջ աշխարհում անցկացված հարցումների արդյունքները: Այստեղ ևս ներկայացված են Հայաստանի ֆինանսական ներգրավվածությունը բնութագրող ցուցանիշները[5]: Հայաստանի առնչությամբ ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների շարքը կրկին հավաքվելու և մշակվելու է 2017 թ.[6]:

---

[1] Տե՛ս September 2014. Financial Inclusion Action Plan (FIAP). Global Partnership for Financial Inclusion (GPFI), էջ 1–2. http://www.worldbank.org/:

[2] Տե՛ս Measuring Financial Inclusion. The Global Findex Database. April 2012. The world Bank. Development Research Group Finance and Private Sector Development Team, էջ 1. http://www.worldbank.org/: Հեղինակային թարգմանություն:

[3] Տե՛ս The Little Data Book on Financial Inclusion. 2012 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. Report generated on: April 15, 2015. http://microdata.worldbank.org:

[4] Տե՛ս The Little Data Book on Financial Inclusion. 2012 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. 2012. http://microdata.worldbank.org, էջ 24:

[5] Տե՛ս The Little Data Book on Financial Inclusion. 2015 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. 2015. http://microdata.worldbank.org, էջ 25:

[6] Տե՛ս Armenia - Global Financial Inclusion (Global Findex) Database 2014. Development Research Group, Finance and Private Sector Development Unit – World Bank. Report generated on: Ocnober 29, 2015. http://microdata.worldbank.org, էջ 3:

Ըստ ամենայնի, խոսքը միայն Հայաստանի մասին չէ. պետք է սպասել ֆինանսական ներգրավվածության գնահատման նույնպիսի՝ ամբողջ աշխարհի համապարփակ հետազոտության իրականացում:

Ֆինանսական ներգրավվածության համընդհանուր գնահատականներն արդեն համեմատությունների դաշտում են: Այսպես՝ «2011–2014 թթ. ընթացքում 700 միլիոն մեծահասակներ դարձել են հաշվետերեր, իսկ հաշիվ չունեցողների թիվը կրճատվել է 20 տոկոսով՝ հասնելով 2,0 միլիարդի: Ինչո՞վ է բացատրվում հաշվետերերի մասնաբաժնի ավելացումը: Զարգացող երկրներում հաշիվների ներթափանցման 13 տոկոս աճը և տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունները (հատկապես էլեկտրոնային փողերը), նպաստում են Սահարայից հարավ Աֆրիկայի երկրներում ֆինանսական ծառայությունների հասանելիության արագ ընդլայնմանը»[7]: Ֆինանսական ներգրավվածության գնահատականները տալիս են առաջին արդյունքները. կրճատվում է այն մեծահասակների թիվը, ովքեր չեն օգտվում հիմնական ֆինանսական ծառայություններից: Հայաստանի դեպքում էլ առկա է ֆինանսական ներգրավվածության նույն ժամկետների դրությամբ համեմատությունների եզրեր: Սակայն, տվյալ պարագայում, առաջնայինը դա չէ:

Առաջնային է Հայաստանում ֆինանսական ներգրավվածության գնահատման գործընթացն ինքնուրույն, ներքին ուժերով կազմակերպման հնարավորությունների բացահայտումը: Սեփական ուժերով ֆինանսական ներգրավվածության պարբերական իրականացումը կարող է որպես հիմք ծառայել երկրի ֆինանսական հատվածի կայունությունն ամրապնդելու համար: Բացի այդ, ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների փոփոխություններն անխուսափելիորեն հանգեցնում են երկրի ֆինանսական հատվածի գործունեության, ապա նաև տնտեսական աճի վրա ազդեցության:

Ուստի, առաջին հերթին հարկ է անդրադառնալ մասնավորապես Հայաստանի համապատասխան ցուցանիշների միջոցով ֆինանսական ներգրավվածության գնահատականների ձևավորման հարցերին, ինչը կատարվել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից մշակված մեթոդական նյութերի հիման վրա:

Թեև ստորև բերված աղյուսակներում ներկայացվել են Հայաստանի ինչպես 2011 թ., այնպես էլ 2014 թ. ֆինանսական ներգրավվածության ցուցանիշները (տարածաշրջանի և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշներին զուգահեռ), սակայն, տվյալ պարագայում, այդ քանակական բնութագրումները պետք է դիտել ոչ առաջնային: Խնդիրն այն է, որ երբ ցուցանիշների մակարդակների համեմատությունները տարածաշրջանի առանձին երկրների կամ աշխարհի միջին արդյունքների հետ էապես տարբերվում են, ապա օրինաչափ է դրանք բարելավման միջոցով փոխելու, համապատասխան միջոցառումներ, միգուցե նաև ռազմավարություն ու դրանից բխող քաղաքականություն մշակելու պահանջը: Իսկ վերջինն անխուսափելիորեն վերահաստատելու է ֆինանսական ներգրավվածության գնահատման ցուցանիշների ներկայումս կիրառվող շարքի հետազոտման անհրաժեշտությունը:

---

[7] Տե՛ս Measuring Financial Inclusion. The Global Findex Database. April 2012. The world Bank. Development Research Group Finance and Private Sector Development Team. P.vi. http://www.worldbank.org/: Հեղինակային թարգմանություն:

Աղյուսակ 1

Հայաստանի 2011 թ. ֆինանսական ներգրավվածության գնահատման ելքային ցուցանիշները[8]

Եվրոպա և Կենտրոնական Ասիա	*Միջինից ցածր եկամուտ*		
Բնակչությունը (միլիոն) 3.1	*Մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ[9] (դոլար) 3.200*		
	Երկրի տվյալները	*Եվրոպա և Կենտրոն. Ասիա*	*Միջինից ցածր եկամուտ*
Հաշիվ պաշտոնական ֆինանսական հաստատությունում			
Մեծահասակներ (%, տարիքը՝ 15+)	17.5	44.9	28.4
Մեծահասակ տղամարդիկ (%, տարիքը՝ 15+)	16.7	49.9	33.9
Մեծահասակ կանայք (%, տարիքը՝ 15+)	18.1	40.0	22.9
Երիտասարդ մեծահասակներ (%, տարիքը՝ 15-24)	13.9	31.9	21.5
Ծեր մեծահասակներ (%, տարիքը՝ 25+)	18.4	48.4	31.2
Մեծահասակներ նախնական կրթությամբ կամ ցածր (%, տարիքը՝ 15+)	7.0	25.6	20.8
Մեծահասակներ միջնակարգ կրթությամբ կամ բարձր (%, տարիքը՝ 15+)	20.3	51.4	45.4
Մեծահասակներ քվինտիլ եկամուտներում, I (ցածր) և II (%, տարիքը՝ 15+)	13.8	36.5	19.7
Մեծահասակներ քվինտիլ եկամուտներում, III, IV և V (բարձր) (%, տարիքը՝ 15+)	20.3	51.1	36.3
Գյուղում բնակվող մեծահասակներ (%, տարիքը՝ 15+)	15.4	41.6	25.3
Քաղաքում բնակվող մեծահասակներ (%, տարիքը՝ 15+)	20.4	50.4	36.0
Հասանելիություն պաշտոնական հաշվին (%, տարիքը՝ 15+)			
Սովորական ամսում 0 ավանդ/ելքագրում (հաշիվ ունեցողների, %)	7.4	4.0	6.8
Սովորական ամսում 0 ավանդ (հաշիվ ունեց., %)	13.2	6.5	11.6
Սովորական ամսում 1-2 ավանդ (հաշիվ ունեց., %)	80.3	80.8	70.9
Սովորական ամսում 3+ ավանդ (հաշիվ ունեց., %)	5.2	5.4	11.8
Սովորական ամսում 0 ելքագրում (հաշիվ ունեց., %)	19.1	6.9	13.7
Սովորական ամսում 1-2 ելքագրում (հաշիվ ունեց., %)	59.6	61.8	64.4
Սովորական ամսում 3+ ելքագրում (հաշիվ ունեց., %)	15.1	22.5	15.1
Բանկոմատը ավանդի ներդրման հիմնական ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	12.4	22.4	4.5
Բանկի գանձապահը ավանդի ներդրման հիմն. ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	41.2	30.7	80.2
Բանկային գործակալը ավանդի ներդրման հիմն. ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	0.0	1.6	4.0
Բանկոմատը ավանդի ելքագրման հիմնական ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	55.4	67.1	31.0
Բանկի գանձապահը ավանդի ելքագրման հիմն. ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	36.8	20.4	56.8
Բանկային գործակալը ավանդի ելքագրման հիմն. ռեժիմն է (հաշիվ ունեց., %)	0.0	1.0	3.0
Ունի դեբետային քարտ	5.2	36.4	10.1
Պաշտոնական հաշիվների օգտագործում (%, տարիքը՝ 15+)			
Հաշվի օգտագործում գործարար. նպատակների համար	2.5	5.3	4.1
Հաշվի օգտագործում աշխատավարձի ստացման համար	7.4	27.3	8.5
Հաշվի օգտագործում պետական վճարումների ստացման համար	2.5	11.0	3.9
Հաշվի օգտագործում դրամական փոխանցումների ստացման համար	2.5	4.8	3.7
Բջջային վճարումներ (%, տարիքը՝ 15+)			
Օգտագործել է բջջային հեռախոսը հաշիվների վճարման համար	0.8	3.0	2.0

[8] Տե՛ս The Little Data Book on Financial Inclusion. 2012 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. 2012. http://microdata.worldbank.org, էջ 24: Հեղինակային թարգմանություն:

[9] Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ)՝ Gross National Income (GNI):

Օգտագործել է բջջային հեռախոսը փող փոխանցելու համար	3.0	2.5	2.4
Օգտագործել է բջջային հեռախոսը փող ստանալու համար	2.0	2.7	3.8
Խնայողություններ (%, տարիքը՝ 15+)			
Խնայել է փող նախորդ տարում	10.5	20.4	27.6
Խնայել է նախորդ տարում պաշտոն. ֆինանս. հաստ.-ում	0.8	7.0	11.1
Խնայել է նախորդ տարում խնայողական ակումբում	0.5	1.3	7.2
Խնայել է նախորդ տարում ապագա ծախսերի համար	5.6	12.8	19.9
Խնայել է նախորդ տարում արտակարգ իրավիճակների համար	6.6	13.9	22.1
Վարկ (%, տարիքը՝ 15+)			
Վարկ պաշտոնական ֆին. հաստատ.-ից նախորդ տարում	18.9	7.7	7.3
Վարկ ընտանիքից կամ ընկերներից նախորդ տարում	32.4	28.2	26.6
Վարկ ոչ պաշտոնական վարկատուից նախորդ տարում	3.0	1.5	5.3
Չմարված վարկ տուն գնելու համար	1.0	1.8	2.2
Չմարված վարկ տունը վերանորոգելու համար	16.0	4.7	4.7
Չմարված վարկ դպրոցական ծախսերի համար	3.8	1.7	6.8
Չմարված վարկ առողջության կամ արտակարգ իրավ. համար	15.1	3.6	14.8
Չմարված վարկ սգո կամ հարսանյաց ծախսերի համար	5.4	1.4	3.9
Ապահովագրություն (%, տարիքը՝ 15+)			
Անձամբ վճարել է բժշկական ապահովագրություն	0.6	4.5	5.1

Ըստ 1 և 2 աղյուսակներում արտացոլված ցուցանիշների՝ 2014 թ. շարքն էապես խմբագրվել ու վերախմբավորվել է: Եթե 2011 թ. ֆինանսական ներգրավվածության «հաշիվ» ընդհանուր շարքում պայմանականորեն բերվել է հաշիվը պաշտոնական ֆինանսական հաստատությունում՝ պաշտոնական հաշիվների հասանելիության, այդ հաշիվների օգտագործման և բջջային հեռախոսով վճարումների ենթախմբերով, ապա 2014 թ. դա ներկայացվել է այլ խմբագրությամբ և ցուցանիշների այլ ենթախմբերով, ինչը, սակայն, ի վերջո, չի փոխել ցուցանիշների ընդհանուր բովանդակությունը:

2011 թ. ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների հաջորդ խմբերն են՝ «Խնայողություններ», «Վարկ» և «Ապահովագրություն»: Վերջինի համեմատությամբ, 2014 թ. գնահատականներում բացակայում է «Ապահովագրությունը» բնութագրող ցուցանիշների խումբը: Թեև պետք է նկատել նաև, որ այդ խմբում ներառվել էր «Անձամբ վճարել է բժշկական ապահովագրությունը» ցուցանիշը:

Այսպիսով՝ առաջին ընդհանրացումը վերաբերում է այն բանին, որ ֆինանսական ներգրավվածությունը, ըստ հեղինակների[10], անձանց՝ պաշտոնական ֆինանսական հաստատությունների կողմից մատուցվող ծառայություններ ստանալու հարաբերություններն են, իսկ ֆինանսական ներգրավվածության գնահատումը՝ հարցման միջոցով նախապես ընտրված ցուցանիշների քանակական չափումը: Ֆինանսական ներգրավվածության գնահատականները դուրս են բերվում «ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող չորս հիմնական ֆինանսական արդյունքների միջոցով՝ վճարումներ, խնայողություններ, վարկ և ապահովագրություն»[11]: Այդ մասին են վկայում աղյուսակների ցուցանիշները:

[10] Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կազմում տարբեր խմբերի շրջանակներում իրականացված հետազոտությունների հեղինակները:

[11] Տե՛ս What do we know about the link between financial inclusion and inclusive growth? Asli Devirguc-Kunt, Leora Klapper, Dorothe Singer. http://blogs.worldbank.org/allaboutfinance/what-do-we-know-about-link-between-financial-inclusion-and-inclusive-growth

Աղյուսակ 2

Հայաստանի 2014 թ. ֆինանսական ներգրավվածության գնահատման ելքային ցուցանիշները[12]

Եվրոպա և Կենտրոնական Ասիա	*Միջինից ցածր եկամուտ*		
Բնակչությունը, տարիքը՝ 15+ (միլիոն) 2,4	*Մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ (դոլար) 3.800*		
	Երկրի տվյալները	*Եվրոպա և Կենտրոն. Ասիա*	*Միջինից ցածր եկամուտ*
Հաշիվ (%, տարիքը՝ 15+)			
Մեծահասակներ	17,7	51,4	42,7
Կանայք	14,7	47,4	36,3
Մեծահասակներ (աղքատ), 40%	10,9	44,2	33,2
Երիտասարդ մեծահասակներ (%, տարիքը՝ 15-24)	10,4	35,6	34,7
Մեծահասակներ (գյուղում բնակվող)	15,5	45,7	40
Հաշիվ ֆինանսական հաստատությունում (%, տարիքը՝ 15+)			
Մեծահասակներ	17,2	51,4	41,8
Մեծահասակներ, 2011	17,5	43,3	28,7
Բջջային հաշիվ (%, տարիքը՝ 15+)			
Մեծահասակներ	0,7	0,3	2,5
Ֆինանսական հաստատությունում հաշվի հասանելիություն (%, տարիքը՝ 15+)			
Ունի դեբետային քարտ	8,4	36,9	21,2
Ունի դեբետային քարտ, 2011	5,2	36,4	10,1
Բանկոմատը ելքագրման հիմնական եղանակն է (հաշիվ ունեցող, %)	51,6	66,7	42,4
Բանկոմատը ելքագրման հիմնական եղանակն է (հաշիվ ունեցող, %), 2011	55,4	72,5	28,1
Հաշվի օգտագործումը նախորդ տարում (%, տարիքը՝ 15+)			
Օգտագործվում է հաշիվը աշխատավարձ ստանալու համար	7.2	22.5	5.6
Օգտագործվում է հաշիվը պետ. փոխանցումներ ստանալու համար	0.7	7.3	3.3
Օգտ. է հաշիվը ֆին. հաստատ. կոմունալ հաշիվները վճարելու համար	1.5	12.5	3.1
Այլ թվային վճարումներ նախորդ տարում (%, տարիքը՝ 15+)			
Օգտագործվում է դեբետային քարտը՝ վճարումներ կատարելու համար	3.9	22.9	9.6
Օգտագործվում է կրեդիտային քարտը՝ վճարումներ կատարելու համար	4.2	14.9	2.8
Օգտագործվում է համացանցը՝ վճարումներ կամ գնումներ կատարելու համար	5.0	11.9	2.6
Ներքին դրամական փոխանցումներ վերջին տարում (%, տարիքը՝ 15+)			
Ուղարկված դրամական փոխանցումներ	3.2	12.9	14.2
Ուղարկված փոխանցումներ ֆին. հաստատ. միջոցով (%)	..	31.5	30.9
Ուղարկված փոխանցումներ բջջ. հեռախոսի միջոցով (%)	..	2.5	7.7
Ուղարկված փոխանցումներ դրամական փոխանցումների օպերատորի միջոցով (%)	..	11.8	18.3
Ստացված դրամական փոխանցումներ	9.1	15.5	17.8
Ստացված փոխանցումներ ֆին. հաստատ. միջոցով (%)	..	22.1	26.0
Ստացված փոխանցումներ բջջ. հեռախոսի միջոցով (%)	..	1.0	5.7
Ստացված փոխանցումներ դրամական փոխանցումների օպերատորի միջոցով (%)	..	15.6	16.6
Խնայողություն նախորդ տարում (%, տարիքը՝ 15+)			
Խնայողություն ֆինանսական հաստատությունում	1.6	8.4	14.8
Խնայողություն ֆինանսական հաստատությունում, 2011	0.8	4.9	11.1
Խնայողություն խնայողական ակումբում կամ ընտանիքից դուրս	4.8	6.6	12.4

[12] Աղբյուրը՝ The Little Data Book on Financial Inclusion. 2015 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. 2015. http://microdata.worldbank.org, էջ 25: Հեղինակային թարգմանություն:

Խնայողություն ցանկացած դրամական միջոցի	21.0	38.5	45.6
Խնայողություն ծերության համար	2.1	11.8	12.6
Խնայողություն գյուղատնտեսության կամ գործի համար	3.2	5.1	11.8
Խնայողություն կրթության կամ դպրոցական վճարների համար	4.7	12.1	20.0
Վարկ նախորդ տարում (%, տարիքը՝ 15+)			
Փոխառություն ֆինանսական հաստատությունից	19.9	12.4	7.5
Փոխառություն ֆինանսական հաստատությունից, 2011	18.9	7.8	7.3
Փոխառություն ընտանիքից կամ ընկերներից	26.9	23.6	33.1
Փոխառություն մասնավոր ոչ պաշտոնական վարկատուից	2.8	2.1	8.5
Փոխառություն ցանկացած դրամական միջոցի	47.3	39.5	47.4
Փոխառություն գյուղատնտեսության կամ գործի համար	8.6	2.8	9.2
Փոխառություն կրթության կամ դպրոցական վճարների համար	5.2	6.2	10.1
Հիփոթեքային վարկ ֆինանսական հաստատությունում	15.2	10.2	4.7

Առանցքային ընդհանրացումը կախված է հետևյալ հարցերին տրվող պատասխաններից: Ով է հաշիվ բացում, դա տնօրինում, խնայում, վարկ կամ փոխառություն վերցնում, ապահովագրություն ստանում և կատարում այն բոլոր գործողությունները, որոնք բխում են համապատասխան խմբերի ցուցանիշների բովանդակությունից: Ակնհայտ է, որ հիմնական մասնակիցն ու դերակատարը չափահաս կամ մեծահասակ անձն է, ով, անձնական նպատակահարմարությունից, գիտելիքից և ընկալումներից ելնելով, շահագրգիռ չէ, կատարում կամ չի կատարում վերը նշված գործողությունները, մասնակցում կամ չի մասնակցում պաշտոնական ֆինանսական հաստատությունների կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունների սպառմանը:

Հետազոտման միավորներ են ոչ թե «Վճարումները», «Խնայողությունները», «Վարկը» կամ «Ապահովագրությունը»՝ որպես ֆինանսական ներգրավվածության աստիճանի արձանագրում ու հետևանք, այլ շարժառիթների, դրդապատճառների ու դրանց արդյունքում կատարված ամենօրյա գործողությունների այն փոխկապված համալիրը, որ ցանկացած անհատ ցուցաբերում է ֆինանսական ծառայությունների առնչությամբ: Ֆինանսական ներգրավվածության ցուցանիշները քանակապես նախ չափում են առանձին անհատի, ապա հանրության վարքը ֆինանսական ծառայությունների կապակցությամբ: Ուստի ֆինանսական ներգրավվածության ընդհանուր հետազոտության հիմնարար միավորը անհատի, ապա նաև հանրության ֆինանսական վարքագիծն է:

Երբ ֆինանսական վարքագիծն առարկայանում է երկրի ֆինանսական ներգրավվածության գնահատականների մեջ (ելքային ցուցանիշների միջոցով), ապա հիմնարար է անհատի և նրա ընտանիքի գոյության պայմանների, գլխավոր շարժառիթների և նպատակադրումների, դրանցից կախված ամենօրյա գործողությունների շուրջ հստակությունը: Հետո վերջինին հավելվում է նաև երկրում մատուցվող ֆինանսական հիմնական ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածությունը, դրանց գործողության մեխանիզմների իմացությունն և կիրառումը՝ ֆինանսական գրագիտությունը:

Այսպիսով՝ երբ առաջադրվում է սեփական ուժերով Հայաստանում ֆինանսական ներգրավվածության պարբերաբար գնահատման նպատակը՝ որպես ֆինանսական կայունության ապահովման ուղղություն, բերված ելքային ցուցանիշների բովանդակային կողմին (բանկային հաշիվ, դրա հասանելիություն ու օգտագործում, ստացված և կատարված վճարումներ, խնայողություն, փոխառություն և այլն) անդրադարձն ավելի հիմնարար հետազոտությունների իրականացման պահանջ է առաջադրում: Խոսքը ֆինանսական

ներգրավվածության մասնակիցների ֆինանսական վարքագծին վերաբերող հիմնարար հետազոտության մասին է:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանում ֆինանսական ներգրավվածության գնահատումը միջազգային ասպարեզում ընթացող համապատասխան գործընթացների մասն է կազմում: Դրանք արդեն ներառվել են ֆինանսական ներգրավվածության ցուցանիշների առաջադրման, տվյալների ստացման ու մշակման համաշխարհային շտեմարանների ձևավորման, համադրելիության եզրեր ապահովելու փուլում: Առաջադրվում է նաև ֆինանսական ներգրավվածության ու տնտեսական աճի միջև կապի բացահայտման անհրաժեշտության հիմնախնդիրը:

Ուստի՝ Հայաստանում ֆինանսական ներգրավվածության ինքնուրույն գնահատման հեռանկարները պայմանավորված են լինելու զուգահեռաբար իրականացվող հետազոտություններով: Խոսքը ֆինանսական ներգրավվածության վերաբերյալ միջազգային ասպարեզում կուտակված փորձի հստակեցման ու մեթոդական հիմքերի բացահայտման, հանրապետությունում կիրառելու նպատակով դրանց տեղայնացման, ինչպես նաև ֆինանսական վարքագծին նվիրված հետազոտությունների մասին է:

Օգտագործված գրականություն

1. Financial Inclusion Action Plan (FIAP). September, 2014. Global Partnership for Financial Inclusion (GPFI). http://www.worldbank.org/.
2. Measuring Financial Inclusion. The Global Findex Database. April, 2012. The World Bank. Development Research Group Finance and Private Sector Development Team. http://www.worldbank.org/.
3. Measuring Financial Inclusion. The Global Findex Database. April 2015. The World Bank. Development Research Group Finance and Private Sector Development Team. http://www.worldbank.org/.
4. The Little Data Book on Financial Inclusion. 2012 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. Report generated on: April 15, 2012. http://microdata.worldbank.org.
5. The Little Data Book on Financial Inclusion. 2015 by the International Bank for Reconstruction and Development/The World Bank. Report generated on: 2015. http://microdata.worldbank.org.
6. Armenia - Global Financial Inclusion (Global Findex) Database 2014. Development Research Group, Finance and Private Sector Development Unit – World Bank. Report generated on: April 15, 2015. http://microdata.worldbank.org.
7. Armenia - Global Financial Inclusion (Global Findex) Database 2014. Development Research Group, Finance and Private Sector Development Unit – World Bank. Report generated on: October 29, 2015. http://microdata.worldbank.org.
8. What do we know about the link between financial inclusion and inclusive growth? Asli Devirguc-Kunt, Leora Klapper, Dorothe Singer. http://blogs.worldbank.org/

СЕРГЕЙ СУКИАСЯН
Руководитель научно-учебной лаборатории
“Финансовая вовлеченность” АГЭУ,
доктор экономических наук, доцент

К вопросу оценки финансовой вовлеченности Армении.– *Влияние “финансовой вовлеченности” (Financial Inclusion) на общее экономическое положение периодически констатируется лидерами стран группы Двадцати. Последние предлагают ряд мер, направленных на расширение вовлеченности. Исследования наднациональных международных финансовых организаций стали основой для формирования оценок по “финансовой вовлеченности”. Опубликованы первые оценки “финансовой вовлеченности” по результатам всеобщих опросов, проведенных в 2011 г. и в 2014 г. (Global Findex Database). Приведены показатели, характеризующие Армению в составе стран Европы и Центральной Азии. Однако первично то, что фундаментальной единицей исследования является “финансовая вовлеченность” личности и общества, что параллельно предполагает исследование процессов оценки “финансовой вовлеченности”, проводимой на международной арене. Целью является проведение местными силами периодической оценки “финансовой вовлеченности” Армении как направления обеспечения финансовой стабильности страны.*

Ключевые слова: *финансовая вовлеченность, всемирный финансово-экономический кризис, план действий по финансовой вовлеченности, международные финансовые организации, глобальная финансовая система, финансовая стабильность, исходные показатели оценки финансовой вовлеченности.*
JEL: G01, G23, G32

SERGEY SUQIASYAN
Head of “Financial Inclusion” Scientific-Education
Laboratory at ASUE, Doctor of Economics,
Associate professor

On the Issue of Financial Inclusion of Armenia.– The impact of financial inclusion on the global economic environment is periodically recorded by the leaders of Group of Twenty who nominate a series of activities aimed at enhancing inclusion. Research and development carried out by international financial institutions has become the basis for the formulation of “Financial inclusion” assessments. The first general assessment of conducted financial inclusion surveys was published (Global Findex Database) in 2011 and in 2014. The indicators characterizing Armenia are included in the region

of Europe and Central Asia. Assessments are in the field of comparison. But the primary point is that the basic unit of research is the individual, and then the general financial behavior, which simultaneously implies the study of financial inclusion processes in the international arena. The goal is to periodically assess financial inclusion in Armenia through local efforts as a means of ensuring financial stability of the country.

Key words: *financial inclusion, global financial and economic crisis, financial inclusion action plan, international financial organizations, global financial system, financial stability, output indicators for financial inclusion assessment.*

JEL: G01, G23, G32